ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

(Պ-1121-04.07.2025-ԱՍ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	Նախագիծ	Նախագծի վերնագիրը խմբագրել հետևյալ շարադասությամբ ««ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Հեղինակ	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքում նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածում հոդվածի համարից առաջ գրել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«Հոդված» բառը:		
3.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող 20-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում լիազորված մարմինը և Ծառայությունը համագործակցում են գործատուների հետ՝ գործընկերային, փոխշահավետ և մշտական հարաբերությունների հաստատման, հետևողական ընդլայնման, խորացման և հետադարձ կապի ապահովման միջոցով»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքում նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածի 7-րդ, 10-րդ, 16-րդ մասերում համապատասխան օրենքների անվանումները շարադրել հետևյալ խմբագրությամբ. 7-րդ մասում՝ ««Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-49-Ն օրենքով», 10-րդ մասում՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			««Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-211-Ն օրենքով», 16-րդ մասում՝ ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի»:		
5.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքում նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածի 7-րդ մասում «ՊՈԱԿ» բառը փոխարինել «Պետական ոչ առևտրային կազմակերպության» բառերով, իսկ 17-րդ մասում «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածի 14-րդ մասը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 20-	Ընդունվել է:	Ընդունվել է:

			րդ հոդվածի 16-րդ մասը խմբագրել հետևյալ շարադասությամբ. « 15. Սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի յուրաքանչյուր չլրացված օրվա համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով:»:		
8.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածի 18-րդ մասը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածի 23-րդ մասում «14-րդ» թվականը փոխարինել «20-րդ»-ով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «իրավական ակտերն» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

11.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
12.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծից հանել «Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 20-րդ հոդվածի 16-րդ մասը, այն է՝. « 15. Սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի յուրաքանչյուր չլրացված օրվա համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով :»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**